

«Մարդիկ 2-3 տասնամյակ ղեկավարում են համայնքը ու չեն տիրապետում ՏԻՄ օրենքին». Ռ.Պետրոսյան

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը «Sputnik Արմենիայի» եթերում պատասխանել է մի շարք հարցերի, որը ներկայացնում ենք ստորև:

«Ժառանգել եմ մի չքնաղ, գեղատեսիլ մարզ, որը բոլոր նախադրյալներն ունի Հայաստանում լինելու էտալոնային մարզ, ինչի ուղղությամբ բուռն աշխատանքներ ենք իրականացնում: Մարզի իրողություններին գնահատականներ տալիս այս փուլում ես շատ ավելի զգուշավոր եմ, քանի որ կան խորքային պրոցեսներ՝ օբյեկտիվ, սուբյեկտիվ, քաղաքական, ուժի կենտրոնների և այլ-այլ կաշկանդող ինստիտուտների հետ կապված: Ունենք համայնքներ, որոնք 2- 3 տասնամյակ նույն մարդիկ ղեկավարում են, համայնքներ, որտեղ մեծմասամբ համայնքի ղեկավարները չեն տիրապետում նույնիսկ ՏԻՄ օրենքին, շատ ու շատ համայնքների ղեկավարների համար բացահայտում է ՏԻՄ օրենքի 12-րդ հոդվածը, որտեղ 20 կետով շարադրված են ՏԻՄ պարտադիր խնդիրները, էլ չեմ խոսում կամավոր խնդիրների մասին: Եվ երբ ես համայնքների ղեկավարներին հարց եմ տալիս «2-3 տասնամյակ ղեկավարելով ձեր համայնքները ու կառչած մնալով ձեր աթոռներից, համայնքներում չունենալով ջեռուցվող մանկապարտեզ, չունենալով գործող մշակույթի տուն՝ ինչպե՞ս եք պատկերացնում ձեր հետագա պաշտոնավարումը, կամ ի՞նչ պոտենցիալ ունեք, որ մինչև օրս չեք կարողացել իրացնել և նոր իշխանությունների հետ պատրաստակամ եք աշխատել ու իրացնել», այլայլվում են: Ու երբ նայում եմ վերջին տարիների ընտրությունների արդյունքները, մեծմասամբ միակ թեկնածուով են հանդես եկել, մրցակցություն չի եղել...

Որպես մարզում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող իրավասու անձ՝ իմ լիազորությունների շրջանակներում, բնականաբար, այցեր եմ

կատարում համայնքներ, մարզային ենթակայության հաստատություններ: Այդ հաստատությունների շքամուտք մտնելիս պարտքս եմ համարում նախ մտնել տնօրենի աշխատասենյակ, նույնը՝ գյուղապետարաններ այցելելիս՝ գյուղապետի աշխատասենյակ, ապա շրջել հաստատությունով: Շատ դեպքերում տնօրենների կամ գյուղապետերի աշխատասենյակները նորաձևության վերջին ճիչով կահավորված են: «Յոլա տանող» միջանցքներում քաղաքացին մտնելով բուժսպասարկում ստանալու՝ ինքը պարզապես մեր պետությունից մեր պետականությունից կարող է հիասթափվել...

Մարզպետարանի աշխատակիցների մասնագիտական պոտենցիալի իրացման առումով՝ աշխատանք ենք տանում, որպեսզի այդ մասնագետներին հասցնենք մասնագիտական այն մակարդակին, որ կարողանան արդյունավետ աշխատանք իրականացնել իրենց ստորաբաժանումներում»:

Ամբողջական հարցազրույցն՝ [այստեղ](https://armeniasputnik.am/radio/20180820/13984352/armenia-kotaygi-marz.html?fbclid=IwAR2f8Fa28olZx4Y_KVWBXZkHGxIRU439ZjryaAAwMsdcljJznM0B_Rs7aqw):

https://armeniasputnik.am/radio/20180820/13984352/armenia-kotaygi-marz.html?fbclid=IwAR2f8Fa28olZx4Y_KVWBXZkHGxIRU439ZjryaAAwMsdcljJznM0B_Rs7aqw